ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՍԵՔՍՈՒԱԼ ԲՆՈՒՅԹԻ ԲՌՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 139 հոդվածով բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններից է: Կարծում ենք, որ, ի տարբերություն տարածված կարծիքի, հանցավոր այս արարքի հանրային բարձր վտանգավորությունը, նախ և առաջ, պայմանավորված է սեռական կրքերի բավարարման նպատակով բռնության, այն գործադրելու սպառնալիքի կիրառման կամ տուժողի անօգնական վիճակի օգտագործման հանգամանքով, այլ ոչ թե արարքի, այսպես կոչված, շեղվածությամբ, խաթարվածությամբ, հակաբնականությամբ: Ավելին, մեր հասարակության մեջ այս հանցատեսակը հաճախ նույնացվում է բռնաբարության հետ, ինչը, ըստ մեզ, բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակի արդյունք է: Նշված հոդվածի համաձայն, վերլուծվող հանցագործության օբյեկտիվ կողմն են կազմում համասեռամոլությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

«Համասեռամոլություն» բառը, որպես եզրույթ, առաջին անգամ առաջարկվել է դեռևս 1869 թվականին հունգարացի բժիշկ Բենկերտի կողմից: Այն առաջացել է երկու բառերի միավորումից՝ հունարեն «homos» (միևնույն, միանման) և լատիներեն «sexus» (սեռ): Ըստ Բենկերտի, համասեռամոլ են համարվում այն տղամարդիկ կամ կանայք, ովքեր համեմատաբար երկար ժամանակ (6 ամիս և ավելի) սեռական հակումներ են ունենում իրենց սեռին պատկանող անձանց նկատմամբ: Նրանց ընդունված է անվանել սեռական փոքրամասնություն: Սակայն այդ հասկացությունը մշակութային և պատմական տեսանկյունից հարաբերական է: Հայտնի է, որ անտիկ աշխարհում միասեռականները և երկսեռականները պատկանել են սեռական մեծամասնությանը, իսկ համասեռամոլությունը մերժողները՝ սեռական փոքրամասնությանը (1):

Ասվածից հետևում է, որ համասեռամոլությունը լինում է երկու տեսակի՝ տղամարդկանց և կանանց: Վերջիններս, իրենց հերթին, նույնպես դասակարգվում են տարբեր տեսակների: Տղամարդկանց համասեռամոլության դրսևորման հիմնական ձևերից է արվամոլությունը: Սվանդական մոտեցման շրջանակներում այն արտահայտվում է սեռական պահանջմունքը «coitus per anum» տարբերակով բավարարելու մեջ, ինչը ենթադրում է արական սեռի այնպիսի զուգընկերների առկայություն, որոնցից մեկը (ակտիվը) իր սեռանդամը մտցնում է մյուսի (պասիվի) հետանցքը(2): Հետևաբար, տղամարդկանց միջև կատարվող սեքսուալ բնույթի այլ գործողություններն արվամոլություն համարվել չեն կարող: Ինչ վերաբերում է կանանց համասեռամոլությանը, ապա այն ընդունված է անվանել լեսբոսություն (լեսբոսական սեր) կամ սաֆիզմ (հին հույն բանաստեղծուհի Սաֆոյի անվամբ, ով բնակվում էր Լեսբոս կղզում և, ըստ ավանդույթի, տարված էր այդ կրքով) (3): Ներկայիս պատկերացմամբ լեսբոսությունն ընդունված է համարել կանացի միասեռական պահանջմունքների դրսևորում, որը կարող է արտահայտվել տարբեր գործողություններով՝ փոխադարձ փայփայանքներով, ձեռնաշարժությամբ, կունիլինգուսով (բերանով ներգործությունը կանացի արտաքին սեռական օրգաններին) կամ անիլինգուսով (բերանով ներգործությունը հետանցքին), տրիբադիայով (կանացի սեռական օրգանների փոխադարձ շփումներ), ակտիվ զուգընկերոջ դեր կատարող կնոջն ամրացված արհեստական սեռանդամի ֆրիկցիաներով (առաջընթաց-հետընթաց շարժումներով) սեռական ակտի ձևացմամբ (4):

Մեր կարծիքով, համասեռամոլության վերը նշված երկու դրսևորումներն էլ կպարունակեն ՀՀ քր. օր.-ի 139 հոդվածով նախատեսված հատկանիշներ, եթե կատարվեն բռնությամբ, դրա գործադրման սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակի օգտագործմամբ:

«Սեքսուալ բնույթի այլ գործողությունները» մասնագիտական գրականության մեջ մեկնաբանվում են տարբեր կերպ: Այսպես, կարծիք կա, որ այդ գործողությունների թվին պետք է դասվեն սեռական նրբերանգ ունեցող ոչ բոլոր, այլ միայն այն գործողությունները, որոնք դրսևորվում են սեռական ներխուժման հետ: Վերջինս՝ սեռական բավարավածության հասնելու նպատակով մի մարդու սեռական օրգանը կամ տարբեր առարկաներ մյուսի բնական այս կամ այն բացվածքը մտցնելն է: Նշված մոտեցման կողմնակիցները համարում են, որ, օրինակ, եթե որևէ առարկա մտցվում է տուժողի հեշտոցը կամ հետանց-

քը՝ նրա առողջությանը վնաս հասցնելու նպատակով, ապա նման ներխուժումը չի կարող դիտարկվել որպես սեքսուալ բնույթի գործողություն և պետք է որակվի առողջությանը վնաս պատճառելու վերաբերյալ նորմերով (5):

Սակայն նման մոտեցմանը դժվար է համաձայնել: Բանն այն է, որ տվյալ դեպքում անհիմն նեղացվում է «սեքսուալ բնույթի գործողություն» հասկացության շրջանակը, ինչը չի կարող արդարացված համարվել: Սեռական բավարավածության հասնելուն ուղղված գործողությունները կարող են դրսևորվել նաև առանց «սեռական ներխուժման»: Այս առումով կարծում ենք, որ սեքսուալ բնույթի այլ գործողությունների համեմատաբար ամբողջական ցանկ է առաջարկում Ա.Ի. Դվորկինը, ով նման գործողությունների թվին է դասում՝ տղամարդու սեռական անդամը կնոջ հետանցքը մտցնելը, տղամարդկանց, տղամարդու և կնոջ միջև օրալ սեքսը, սեռական ակտի ծևացումը՝ տղամարդու սեռական անդամը շարժելով կնոջ կաթնագեղձերի, ազդրերի միջև, ուսերի, պարանոցի, որովայնի վրայով, անգամ տուժողի մարմնին հատուկ հասցված վերքերին, արվամոլության ակտի ծևացումը՝ տղամարդու կողմից մեկ այլ տղամարդու հետանցքը սեռական անդամի կաղապարվածք մտցնելով, կնոջ կողմից մեկ այլ կնոջ հեշտոցը, հետանցքը տղամարդու սեռական անդամի կաղապարվածք մտցնելը, բռնություն գործադրելու միջոցով անօգնական վիճակի հասցված տուժողի ներկայությամբ հանցավորի ծեռնաշարժությունը, տուժողին հարկադրելը հանցավորի սեռական օրգանը ծեռնաշարժելուն (6):

Այսպիսով, սեքսուալ բնույթի գործողությունները կարող են դրսևորվել ինչպես սեռական ակտի ծևացման, այնպես էլ սեռական բավարարվածության հասնելուն ուղղված ցանկացած այլ գործողություններով: Ասվածի հիման վրա սեքսուալ բնույթի բռնի գործողությունները կարելի է դասակարգել երկու խմբի՝ ա) տուժողի անձի հետ կապված (բռնի արվամոլություն, բռնի լեսբոսություն) և բ) սեռական կրքի բավարարման եղանակի հետ կապված:

Շարունակելով սեքսուալ բնույթի բռնի գործողությունների օբյեկտիվ կողմի քննարկումը՝ նշենք, որ դրանք պետք է կատարվեն տուժողի կամքին հակառակ: Սա նշանակում է, որ վերջինս չի ցանկանում (համաձայն չէ) կատարել թվարկված գործողությունները կամ զրկված է այդ կապակցությամբ իր կամքն արտահայտելու կամ պնդելու հնարավորությունից (անօգնական վիճակն օգտագործելու դեպքում):

Այժմ անդրադառնանք ՀՀ քր. օր.-ի 139 հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ հանդիսացող բռնության, դրա սպառնալիքի և տուժողի անօգնական վիճակի օգտագործման առանձնահատկությունների քննարկմանը:

Ֆիզիկական բռնությունը կարող է դրսևորվել անձին հարվածներ հասցնելով, ծեծելով, մարմնական վնասվածքներ պատճառելով կամ մարդու մարմնի վրա այլ ներգործությամբ՝ ֆիզիկական ուժ, սառը զենք, հրազեն կամ այլ առարկաներ, հեղուկներ՝ թթվուտ, եփջուր, սորոմ, նյութեր գործադրելով, ինչպես նաև առանց արտաքին հյուսվածքների վնասման ներքին օրգանների վրա ներգործությամբ (արբեցնելով, քնեցնելով, թունավորելով և այլն) (7) :

Հոգեկան բռնությունը դրսևորվում է տուժողի կամ այլ անձանց նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքով: Այլ բնույթի սպառնալիքները չեն ձևավորում քննարկվող հանցակազմը: Բռնության սպառնալիքն արտահայտվում է ցանկացած տեսակի բռնության (ծեծելու սպառնալիքից մինչև սպանության սպառնալիքի) գործադրմամբ: Սպառնալիքի դրսևորման ձևը կարող է տարբեր լինել՝ խոսքով, կոնկլյուդենտ շարժումներով (ժեստերի միջոցով), զենքի ցուցադրմամբ և այլն (8):

Ինչպես արդեն նշել ենք, բռնությունը կամ այն գործադրելու սպառնալիքը կարող են ուղղվել ինչպես տուժողին, այնպես էլ այլ անձի: «Այլ անձ» հասկացությունը չի պարզաբանվում օրենքում: Մեր կարծիքով, որպես այդպիսին կարող են լինել ինչպես տուժողի հարազատները, մերձավորները, ծանոթները, այնպես էլ նրա հետ որևէ կապ չունեցող ցանկացած անձ (օրինակ՝ պատահական անցորդ):

Անօգնական պետք է համարել այն վիճակը, երբ տուժողը չի կարող հասկանալ իր հետ կատարվող գործողությունների բնույթը և նշանակությունը կամ, հասկանալով դա, ֆիզիկապես ի վիճակի չէ դիմադրություն ցուցաբերել հանցավորին: Փաստորեն, քննարկվող վիճակը կարելի է դասակարգել երկու տեսակի՝ ա) հոգեկան անօգնականություն, երբ տուժողը չի գիտակցում իր հետ կատարվող սեռական ակտի էությունն ու նշանակությունը (օրինակ՝ հոգեկան հիվանդության, անգիտակից վիճակի, փոքրահասակության հետևանքով և այլն) և բ) ֆիզիկական անօգնականություն, որի պարագայում տուժողը թեև գիտակցում է իր հետ կատարվող սեռական ակտի էությունն ու նշանակությունը, սակայն ի վիճակի չէ դրան դիմադրել, (օրինակ՝ հոգեկան գործունեու-

թյան խանգարման հետ չկապված հիվանդության, տարեց հասակի կամ ֆիզիկական այլ թերությունների ազդեցության տակ) (9):

Այսպիսով, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների օբյեկտիվ կողմի առանձնահատկությունների վերլուծության հիման վրա կարելի է մատնանշել քննարկվող հանցագործության և բռնաբարության հանցակազմերի հետևյալ ընդհանրությունները և տարբերությունները: Մասնավորապես, օբյեկտիվ կողմի կտրվածքով երկու հանցատեսակներն էլ բնութագրվում են տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով: Ինչ վերաբերում է դրանց տարբերություններին, ապա վերջիններս կայանում են հետևյալում. եթե բռնաբարության օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն բռնի բնական սեռական հարաբերությամբ (տղամարդու առնանդամը կնոջ հեշտոցը մտցնելով), ապա սեքսուալ բնույթի բռնի գործողությունները կարող են դրսևորվել ինչպես բնական սեռական հարաբերությամբ (կնոջ կողմից տղամարդու նկատմամբ), այնպես էլ սեռական կրքերին խաթարված ձևով՝ հակաբնական եղանակով հագուրդ տալով:

Գրականություն

1. Сидоров П.И., Дерягин Г.Б. Сексуальное поведение и насилие.-М., 2007, с.77-78
2. Ю.М. Александров, Н.П. Бондарь Мужеложсвто и борьба с ним /уголовно-правовые и криминологические аспекты/ Киев 1975, п. 5
3. Гилинский Я.И. Девиантность, преступность, социальный контроль. Избранные статьи.-СПб, 2004, с. 62-63
4. Дерягин Г.Б. Криминальная сексология.-М.-2008, с.271
5. Изотов Н.Н. Уголовная ответственность за насильственные действия сексуального характера. Автореф. дис. .... канд. юрид. наук. Ставрополь, 2000, п.13-14
6. Расследование многоэпизодных убийств, совершенных на сексуальной почве / Под ред. А. И. Дворкина.-М., 2003.-с. 253-254
7. Гаухман Л.Д. Насилие как средство совершения преступления М. 1974,с. 76
8. Головлев Ю.В. Уголовная ответственность за изнасилование: проблемы квалификации и применения //Закон и право, N 10. 2004 с. 37
9. Яковлев Я.М. Половые преступления. Душамбе. – 1969, с. 130-131